

կատարելութեանը հասած է: Եւ Անթոնելլոյ իր այս գործով, զէպ ի խաղաղ ու հաւասարակշիռ համաչափութիւնը կը յառաջագործէ: Դէմքերու օրինակումին մէջ ազնուական պարզութիւն մը ունի Անթոնելլոն, իսկ զգալի ձգտում մ'ալ՝ արտայայտական զգայարաններու (աչքերու և բերնի) գիծերը գաղափարականացնելու մէջ: Այս շրջանի երեք մեծ դիմանկարիչներն են՝ Ճիովաննի Ֆաւէյը, Բիերոյ տէրը Պրանչետի և Աերոնելլոյ տա Մեսսինա:

Առաջինը, իրականը լուսանկարչական

ճշտութեամբ կը նկարէ: Բիերոն, երկնաւորայտին վրայ մետաղադրելու վայելչութեամբ ու շնորհքով կ'իսադէմքեր կը գծէ. իսկ Անթոնելլոն կը դնէ դէմքը երեք չորրորդի վրայ, բնական ու բարոյական խառնուածք յատկանշող զլխու և պարանոցի շարժման մեծ հոգ կը տանի, և մանաւանդ աչքի ու բերնի գաղափարային գիծերով կը յաջողի անհատական խոր դրոշմ մը տալ ենթակային: Իր ոճը զպրոց շինեց ու ինք Չորսհարիւրի խաւացի ամենամեծ դիմանկարիչն եղաւ:

(Շար.)

ԶԱՐԵՆ ՄՈՒԹԱՅԵԱՆ

## ԱԻԱՆԴԱՎԷՊ ՄԸ ՍԵՒԱՆԻ ՎԱՆՔԻՆ ԱՆՑԵԱԼԷՆ

Սեանի հարաւ-արեւելեան կողմը, բարձր ժայռի մը գագաթէն որ հոն կ'ամբառնայ, Ժ.Գ. Գարուն, առաջին անգամ, Առաքելոց վանքին արեւմտեան Շնորհաւոյն «Շնորհա մեղ Տէր» երկրայեան երգը երգած են հետեւեալ պատճառով:

Այդ Գարուն՝ Լեզկները սկսեւ են ամէն կողմ յարձակել ու կողոպտել:

Սեանի վանքն ալ կողոպտուեալ համար անոնք խորամանկութեամբ 40 արկղ կը շինեն և իւրաքանչիւրին մէջ կը դնեն մէկ մէկ զինուած լեզկի ու կը փակեն արկղները:

Երբեք լեզկի, վաճառականի հազուադէպ, 40 արկղները կը բերեն վանք՝ ըսելով թէ լեզկիները փախած են և կը խնդրեն որ այս արկղները ժամանակ մը մնան հոն, մինչեւ որ անոնց աստատակութիւնները վերջանան:

Միաբանութիւնը հաւատարմով այս խօսքերուն, կ'ընդունի երկու լեզկիներն ու արկղները: Ասոնց դիտարկութիւնն է եղեր՝ դէշեր ատեն դադանի բանալ արկղները և 40 զինեալ լեզկիներն արձկելով՝ կոտորել Միաբանութիւնը և բոլորովին կողոպտել վանքը:

Բարեբախտաբար չեն յաջողիր:

Միաբանութիւնէն վարդապետ մը՝ սենեկէն վանքի է փոքրաւորը՝ դասը շփոթաւորն համար փոքրաւորն ալ արկղներուն կողմն երթալով՝ մէկին վրայ նստած՝ կըզարկնէ հետ կը խաղայ եղեր՝ ասոնց անդին դարձնելով պանքին: Ու յանկարծ արկղին մէջէն ձայն մըն է որ կը զայն: «Վազըթ կէլով, չըգալմ» (ժամանակն եկաւ, լսուի): Փոքրաւորը շուտով վարդապետին քով կ'առնէ ելլելը: Փոքրաւորը շուտով վարդապետին քով կ'առնէ ելլելը: Փոքրաւորը շուտով վարդապետին քով կ'առնէ ելլելը:

Եւ երբ կը մօտենան նոյն արկղին՝ դարձեալ նոյն ձայնը կը լսեն: Այն ատեն կը բանան արկղը որուն

մէջ զինուած առաջակ մը կ'երեւի. իսկոյն սպաննելով՝ անոր հաշիւը կը մաքրեն: Յետոյ միւս արկղները՝ ասոնց բանալով՝ յիշեալ ժայռէն լիճը կը զտրեն՝ դուռնալ նախաթեմը երգելով: «Շնորհա մեղ Տէր ի դէշերի զերկնային զխաղաղութիւն քո և պահեալ զմեզ ի պաշտարանաց թշնամուոյն ամենայաղթ զօրութեամբ սուրբ խաչի քո»:

\* \* \*

Այս աւանդակէտի մասին Հ. Աւիշան ալ կը խօսի իր «Սիւսական»-ին մէջ (Տե՛ս Սեան, էջ 78), որ փոխանակ լեզկիի պարզապէս «Գաւառն աստատակ» կը գործածէ, առանց մանրամասնութեանց իջնելու:

Սակայն զէպքի թուականն ու «Շնորհա մեղ Տէր» երգի հարցը իրականին մէջ շատ տարբեր է մեզի առաջ դրածէն՝ ինչպէս վերը գրինք:

Վասն զի, ինչպէս Հ. Աւիշան կը նկատէ, խոսքով Անձեւացիին՝ Նարեկացւոյն հօր օրով իսկ կար ալ աւանդութիւնը, որուն համար ան Ժամագրոց մեկնութեան մէջ կ'ախարհէ. «Գեւ. և մարգիկ անյապաքան միշտ խոկան ի նենգէ. . . որպէս և ի Սեանայ կըզդոյն յայտ է, վասն որոյ և զԵրզն ասի (խմա՛ «Շնորհա մեղ Տէր») երգէ՛ ի յայտնել Գաւառնոց թշնամուոյն» ասելով. «Չխորհուրդն զոր խորհիք՝ խափանել Տէր» ևն. Աւիշան կ'աւելցնէ. «Անրկաբայ թշնամուոյն գէպքը, այլ հանդամանք և ժամանակն անտոյգ»:

Սխալ է հետեւեալ Շնորհաւոյն ընծայել «Շնորհա մեղ Տէր»-ը որ Եսայեայ Ը. 9 ևն. համարներուն յարաբերութիւնն է և դոյութիւնն ունէր արդէն Ժ. Գարուն. ինչպէս տաճկերէն խօսքերու այդ ձեւն ալ յայտնի է որ հին լէ:

ԽՄՐ.

ԳԻՏԱԿԱՆ

## ՀԱՄԱՄՈՒՐԱՊԻԻ ՕՐԻՆԱԳԻՐՔԸ

### «ՕՐԷՆՔՆԵՐ՝ ԶՈՐՍ ՀԱՍՏԱՏԵՑ ՀԱՄՄՈՒՐԱՊԻԻ, ԱՐՔԱՅՆ ԻՄԱՍՏՈՒՆ»

(Համեմուրապիի օրէնքներուն թարգմանութիւնը եւ համեմատական օրէնքներ Ս. Գրոց մէջ)

ՊԱՐԶ ԵՒ ՍՐԲԱՊԻՂՄ ԳՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՈՐՍՈՒԱՄ ԻՐԵՐ

8. — Եթէ մէկը եզ մը, խոյ մը, էշ մը, խոզ մը կամ նաւակ մը գողցած է տաճարէն կամ պալատէն, անոր արժէքին երեսնապատիկը պիտի վճարէ, և եթէ ազատագրեալ մըն է արժէքին տասնապատիկը պիտի վճարէ, և եթէ վճարելիք չունի պիտի սպանուի:

(Իսկ եթէ գողացի որ արջառ, կամ ոչխար, և սպանցէ կամ վաճառեցէ, հինգ արջառ ընդ արջառոյն տուժեցի, և չորս ոչխար ընդ ոչխարին:

Իսկ եթէ յական գտանիցի գող... և ոչ ինչ գտանիցի նորա (հատուցանել) վաճառեցի փոխանակ գողութեանն իւրոյ: Իսկ եթէ ըմբռնեցի և գացի ի ձեռքին նորա գողոնն՝ յարջառոյ, և յիշոյ մինչեւ ցոյխար կրկին տուժեցի: Ելից. ԻԲ. 1-4.)

9. — Եթէ մէկը որ առարկայ մը կորսնցուցած է՝ զայն յետոյ ուրիշի մը քով գտնէ. — Եթէ կորսուած իրը գտնողն ըսէ՝ այսինչը զայս ինծի ծախեց և ես զայն ստացայ վկաներու ներկայութեան, և միւս կողմէն տէրն ալ ըսէ թէ՛ ես վկաներ պիտի կանչեմ որ իմ առարկան պիտի կանչէ իրեն վաճառողը, և գնումի վկաները: Տէրն ալ որ իր կորուստած առարկան կ'ուզէ՝ պէտք է բերէ վկաներ որ ճանչնան իր կորուստած առարկան, դատաւորը պիտի քննէ անոնց վկայութիւնը, ամէնքը պիտի խոստովանին Աստուծոյ առջեւ ինչ որ գիտեն, և վաճառողը իբրեւ գող պիտի նկատուի և մահապարտ պիտի դատուի: Տէրը իր առարկան պիտի վերստանայ և գնողը

պիտի վերստանայ իր վճարած գրամը՝ ծախողին տունէն:

(Եթէ տացէ որ ընկերի իւրում էշ կամ եզն կամ ոչխար կամ այլ ինչ անասուն ի պահեստ, և բեկցի կամ մեռցի կամ գերի վարեցի, և ոչ որ գիտացէ, երդումն Աստուծոյ լիցի ի մէջ երկոցուն, եթէ նենգանօք ինչ չիցէ գնացեալ ամենեւին ընդ աւանդ ընկերի իւրոյ, ապա յանձն առցէ տէր նորա, և մի տուժեցի:

Ելից. ԻԲ. 10-11

Իսկ եթէ որ տացէ ընկերի իւրում արծաթ կամ այլ ինչ կարասի զիւր յաւանդ, և գողանայցի ի տանէ առնն, եթէ գտցի որ գողացան՝ կրկին տուժեցի:)

10. — Եթէ գնողը չէ բերած իրեն վաճառողն ու գնման վկաները, մինչ տէրը իրենները բերած է, որոնք իր առարկան կը ճանչնան, այն ատեն գնողը կը նկատուի որպէս գող և մահու արժանի կը դատուի: Տէրը պիտի վերստանայ իր կորուստած իրը:

11. — Իսկ եթէ տէրն է որ չէ բերած վկաները որ իր առարկան ճանչնան, այն ատեն անի նենգամիտ է, և անարդար կերպով զրպարտած է, մահապարտ է:

12. — Եթէ՛ մինչ այդ՝ վաճառողը մեռնի, գնողը վաճառողին ինչքերէն իր պահանջածին հնգապատիկը պիտի առնէ:

13. — Եթէ ասի չի կրնար դիւրաւ իրեն վկայ գտնել, դատաւորը անոր վեցամսեայ ժամանակ կը սահմանէ. եթէ երեքը այս միջոցն ալ անցնի և դեռ մէջտեղ չբերէ իր վկաները, անի չարամիտ է, նովին իսկ գործով դատապարտուած է:

14. — Եթէ մէկը տղայ մը գողնայ՝ մահապարտ է: